**2020-2022թթ. Ադրբեջանի կողմից հրադադարի խախտման դեպքերի և Արցախի խաղաղ բնակչության իրավունքների խախտման մասին**

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ստորագրումից հետո ադրբեջանական կողմը դիմել է Արցախի ժողովրդի իրավունքների խախտումների հանգեցնող հանցավոր գործողությունների, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար հանդես է եկել հայտարարություններով:

Անցած երկու տարվա ընթացքում արձանագրվել են հրադադարի խախտման, հոգեբանական ահաբեկչության, ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի խաթարման, գյուղատնտեսական աշխատանքների խոչընդոտման, մշակութային արժեքների վանդալիզմի և այլ բնույթի հայտնի ապօրինական ու միջազգային մարդասիրական իրավունքի խախտման բացահայտ դրսևորումներ, որոնք հանգեցրել են Արցախի ժողովրդի՝ կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, ազատ տեղաշարժի, անձնական և ընտանեկան կյանքի, մշակութային և կրոնական իրավունքների, արժանապատվության անխախտելիության իրավունքի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, խտրականության արգելքի խախտումների:

- 2020 թվականի նոյեմբերի 10-ից 2022 թվականի նոյեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում Արցախի իրավապահ մարմինների կողմից արձանագրվել է նյութական և մարդկային վնասի հանգեցրած հանցագործության 121 դեպք:
- Սպանվել է 18 անձ (3-ը՝ քաղաքացիական, 15-ը՝ զինվորական), սպանության փորձի ենթարկվել՝ 132 անձ (54-ը՝ քաղաքացիական, 78-ը՝ զինվորական), հրազենային վիրավորում է ստացել և ֆիզիկական բռնության ենթարկվել 67 անձ (16-ը՝ քաղաքացիական անձ):
- Պատահականորեն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում հայտնված 8 անձանցից 5-ը վերադարձվել է բռնության, խոշտանգման բացահայտ հետքերով, կոտրվածքներով: Հայկական կողմին վերադարձված նշված անձանցից Մարտունու շրջանի բնակիչ, անասնապահությամբ զբաղվող՝ 1989թ. ծնված Արտակ Անանյանը ընդամենը ամիսներ անց մահացել է:
- Թիրախավորվել է 13 բնակելի տուն, վնասվել կամ ոչնչացվել է 8 գյուղատնտեսական տեխնիկա, 22 տրանսպորտային միջոց, 16 այլ գույք, հրկիզվել է 5 այգի, խաղաղ բնակչությունից հափշտակվել են մանր և խոշոր

եղջերավոր անասուններ: Պատահականորեն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող արոտավայրեր անցած կենդանիները չեն վերադարձվում, այլ հափշտակվում և օգտագործվում են ադրբեջանական զինված ուժերի ներկայացուցիչների կողմից:

- Բացահայտ խոչընդոտվում են շփման գծի հարևանությամբ գտնվող տարածքներում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքները: Թիրախային կրակոցներ են արձակվում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացիական անձանց ու գյուղատնտեսական տեխնիկայի ուղղությամբ, որից հետո աշխատանքները դադարեցվում են: Ադրբեջանական կողմի նման հանցավոր գործողությունները ակտիվանում են հատկապես գյուղատնտեսական սեզոնի և բերքահավաքի ժամանակ: Ադրբեջանցի զինվորականները երբեմն անմիջապես մտնում են այգիները և զենքի գործադրման սպառնալիքով բերքահավաքին մասնակցող անձանց ստիպում լքել այն: Նման վարքագծի հետևանքով սպանվել է Մարտակերտի շրջանի բնակիչ, հողագործությամբ զբաղվող Արամ Տեփնանցը, Մարտունու շրջանի բնակիչ, անասնապահությամբ զբաղվող Սեյրան Սարգսյանը:

- Ճնշում գործադրելու նպատակով պարբերաբար խաթարվում է կենսական նշանակության ենթակառուցվածքների աշխատանքը, որպիսին արձանագրվել է 2022 թվականի մարտին, երբ Ադրբեջանի կողմից գազափողովակի պայթեցման հետևանքով շուրջ 20 օր Արցախի ողջ բնակչությունը զրկված էր գազամատակարարումից և ջեռուցումից: Հատուկ խլացուցիչների միջոցով շարունակվում են խլացվել կապն ու հաղորդակցությունը:

- Ի հեճուկս միջազգային տարբեր կառույցների կոչերի և հայտարարությունների՝ հրադադարի հաստատումից հետո բաց աղբյուրների մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են ադրբեջանական օկուպացիայի տակ հայտնված տարածքներում հայկական հոգևոր-մշակութային արժեքների, գերեզմանների նկատմամբ վանդալիզմի, ոչնչացման և պղծման հարյուրից ավելի դեպքեր:

- Ադրբեջանում պետական մակարդակով շարունակվում է հայատյացության քաղաքականությունը: Ատելության քարոզ իրականացվում է Ադրբեջանի նախագահի, իշխող ուժի և հանրային ազդեցություն ունեցող անձանց անմիջական մասնակցությամբ: Ադրբեջանական մանկապարտեզներում և դպրոցներում շարունակվում է հայերի նկատմամբ ատելության վրա հիմնված այսպես կոչված «հայրենասիրական» դաստիարակության մեթոդի կիրառումը:

Այս բոլոր գործողությունները Արցախի էթնիկ զտման և Արցախի ժողովրդին ցեղասպանության ենթարկելու ադրբեջանական վարքագծի փաստական ապացույցներն են: Դրանք ավելի խոսուն են, քան ադրբեջանական ղեկավարության կեղծ խաղաղաիրությունն ու տվող սուտխոստումները:

## 2020-2022 Cases of Violation of the Ceasefire Regime by Azerbaijan and Violations of the Rights of the Civilian Population of Artsakh

Following the Trilateral statement on November 9, 2020, the Azerbaijani side resorted to criminal actions leading to violations of the rights of the people of Artsakh about which the Staff of the Human Rights Defender regularly made statements.

Over the past two years, hundreds of illegal and blatant cases of violation of the international humanitarian law have been recorded, including violation of the ceasefire regime, psychological terrorism, disruption of the normal operation of infrastructures, obstruction of agricultural work, vandalism of cultural property and other cases, which led to the violation of the rights to life, physical and mental integrity, property, free movement, personal and family life, cultural and religious rights, the right to inviolability of dignity, torture, inhuman or degrading treatment, violations of the prohibition of discrimination.

- In the period between November 10, 2020 and November 13, 2022, 121 cases of crime leading to material and human damage were recorded by the law enforcement bodies of Artsakh.
- 18 people were killed (3 civilians, 15 military), 132 people were subjected to attempted murder (54 civilians, 78 military), 67 people were shot and subjected to physical violence (16 civilians).
- 5 of 8 persons who accidently appeared in the territories under the control of Azerbaijan were returned with obvious traces of violence, torture and fractures. Among the mentioned persons, a resident of the Martuni region Artak Manasyan, born in 1989, died just a few months later.
- 13 residential buildings were targeted, 8 agricultural machines, 22 vehicles, 16 other objects were damaged or destroyed, 5 gardens were burnt, small and large cattle were seized from the civilian population. Animals accidently passed to the pastures under the control of Azerbaijan are not returned but seized and used by the representatives of the Azerbaijani armed forces.

- Agricultural work carried out in the territories located near the contact line is obviously obstructed.  Targeted shots are fired in the direction of the civilians engaged in agriculture work and agricultural machines after which the work stops. Such criminal actions by the Azerbaijani side are intensified especially during the agricultural season and harvest. The Azerbaijani military sometime enter immediately the gardens and under the threat of using weapons, force the participants of the harvest to leave the place. As a result of such behavior, Aram Tepnants from Martakert region, engaged in agriculture, and Seyran Sargsyan from Martuni region, engaged in cattle breeding were killed.
- With the aim to exert pressure, the work of vital infrastructures is periodically disrupted which was recorded in March, 2022 when the entire population of Artsakh was deprived of gas supply and heating for about 20 days, following the explosion of a gas pipeline by Azerbaijan.
- Contrary to the appeals and statements of various international structures, as a result of monitoring of open sources, after the establishment of ceasefire, more than a hundred cases of vandalism, destruction and desecration of Armenian religious and cultural values, graves in the territories under the Azerbaijani control have been recorded.
- The policy of Armenophobia continues at the state level in Azerbaijan. Hate propaganda is carried with the direct participation of the President of Azerbaijan, the ruling power and persons with public influence. The so-called method of “patriotic” education based on hatred of Armenians continues to be used in the Azerbaijani kindergartens and schools.

All these actions serve as actual proof of the policy of ethnic cleansing and genocide pursued by Azerbaijan towards the people of Artsakh. They are more eloquent than the false pacifism and fake promises of the Azerbaijani leadership.

## О случаях нарушения Азербайджаном режима прекращения огня и нарушении прав мирного населения Арцаха в 2020-2022 гг.

После подписания трёхстороннего заявления от 9 ноября 2020 года азербайджанская сторона продолжает прибегать к преступным действиям, приводящим к нарушению прав народа Арцаха, с заявлениями о которых Аппарат защитника прав человека периодически выступал.

За прошедшие два года были зафиксированы сотни случаев незаконных и вопиющих нарушений международного гуманитарного права, связанных с нарушением режима прекращения огня, психологическим террором, нарушением нормальной работы инфраструктур, препятствованием сельскохозяйственным работам, вандализмом в отношении культурных ценностей и других преступных деяний, которые привели к ограничению права народа Арцаха на жизнь, на физическую и психическую неприкосновенность, на частную собственность, на свободное передвижение, на личную и семейную жизнь, на неприкосновенность достоинства, ограничению культурных и религиозных прав, а также нарушению закона о запрете пыток, бесчеловечном или унижающем достоинство обращении и дискриминации.

- С 10 ноября 2020 года по 13 ноября 2022 года правоохранительными органами Арцаха был зарегистрирован 121 случай преступления, повлёкшего за собой материальный и человеческий ущерб.
- Было убито 18 человек (3 гражданских лиц, 15 военных), 132 человека подверглись покушению на убийство (54 гражданских лиц, 78 военных), 67 человек получили огнестрельное ранение и подверглись физическому насилию (из которых – 16 гражданских лиц).
- 5 из 8 человек, случайно перешедших на контролируемые Азербайджаном территории, были возвращены с явными следами насилия, пыток и переломов. Из возвращённых армянской стороне указанных лиц Артак Манасян, житель Мартунинского района 1989 года рождения, занимающийся скотоводством, скончался всего через несколько месяцев после данного инцидента.
- 13 жилых домов оказались под прямым прицелом, 8 сельскохозяйственных машин, 22 транспортных средства и 16 других объектов были повреждены или уничтожены, 5 садов были подожжены, у мирного населения похищен мелкий и крупный рогатый скот. Животные, случайно перешедшие на пастбища, ныне находящиеся под контролем Азербайджана, не возвращаются, а похищаются и используются представителями азербайджанских вооружённых сил.
- Открыто препятствуются сельскохозяйственные работы, проводимые на территориях, расположенных около линии соприкосновения. Производятся прицельные выстрелы по гражданским лицам и технике, осуществляющим сельскохозяйственные работы, после чего работы прекращаются. Подобные преступные действия азербайджанской стороны особенно активизируются во время сельскохозяйственного сезона и сбора урожая. Иногда азербайджанские военные вторгаются непосредственно в сады и заставляют участников сбора урожая покинуть местность под угрозой применения оружия. В результате подобного поведения азербайджанскими вооруженными силами был убит Арам Тепнанц, житель Мартакертского района, занимающийся земледелием, и Сейран Саркисян, житель Мартунинского района, занимающийся скотоводством.
- С целью оказания давления периодически нарушается работа жизненно важных инфраструктур, что было зафиксировано в марте 2022 года, когда в результате взрыва газопровода Азербайджаном около 20 дней всё население Арцаха было лишено газоснабжения и отопления. Связь и коммуникации постоянно заглушаются с помощью специальных глушителей.

- В результате мониторинга открытых источников после установления режима прекращения огня было зафиксировано более ста случаев вандализма, уничтожения и осквернения армянских духовно-культурных ценностей, могил на территориях, ныне находящихся под оккупацией Азербайджана, вопреки призывам и заявлениям различных международных структур.
- В Азербайджане на государственном уровне продолжается политика армянофобии. Пропаганда ненависти осуществляется при непосредственном участии президента Азербайджана, правящей власти и лиц, имеющих общественное влияние. В азербайджанских детских садах и школах продолжается применение так называемого метода «патриотического» воспитания, основанного на ненависти к армянам.

Все эти действия служат фактическим доказательством политики этнической чистки и геноцида, проводимой Азербайджаном по отношению к народу Арцаха. Эти действия намного более красноречивы, чем лживое миролюбие и лжеобещания азербайджанского руководства.

